

491.99(077)
1 - 62

34/6

18 MAY 2010

~~375:491.542~~

4-93

Վ. Ա. Խ. Հ. ԼՈՒԺԱԴԱԿՈՄԱՏԻ
ուսումնա-մեթոդական սեկուր

ԳՅԱ. 99 (077) ԾՐԱԳՐԵՐ
ի-62 ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ
(Քայլաբային լիվ գուղական)

ԻՆՉՊԵՍ ՈԳՏԱԳՈՐԾԵԼ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԴԱՍԱԳՐՔԵՐԸ ՆՈՐ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ

ՈՒՍՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ
Վ. Ս. Խ. 4. ԼՈՒՍԴՈՂԿՈՄԱՏԻ ԿՈԼԵԳԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ



26 APR 2013

70. 847

8374

3

ՄԵՐԱԳՐԵց յեկ բարձրին
Ա. ԴԻՎ. Ա. Թ. ՅԱ. Ն.

ԻՆՉՊԵ՞Ս ՈԳՏԱԳՈՐԾԵԼ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՅԵՎ ԳՐԱ- ԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ

Ներկա ուս. տարվանից համկոմկուսի կենտկոմի գորոշումները կայուն ծրագրերի և դասագրքերի մասին իրազործված են; Արդեն բոլոր առարկաների կայուն ծրագրերը հրապարակի վրա յեն և դպրոցները ղեկավարվում են դրանցով; Նույնը պետք է առել նաև հայոց լեզվի և գրականության մասին. արդեն լույս են տեսել ՀՍԽՀ կուստողկոմատի հրատարակությամբ հայոց լեզվի և գրականության ծրագրերը*), վոր հատուկ համաձայնությամբ պարտադիր են նաև Վրաստանի հայկական դպրոցների համար; Այդ ծրագրերի համաձայն կազմված և արդեն լույս են տեսել ՀՍԽՀ Պետհրատի հրատարակությամբ V, VI, VII իւ. իւ. դասագրքերը; Թեև այս դասագրքերը ևս լեզվին չեն համապատասխանում ծրագրերին. մասնավորապես բացակայում են նմուշներ վրաց գրականությունից, այնուամենայնիվ, նրանք, ավելի քան մինչեւ որս լույս տեսած դասագրքերը, կարող են բավարարել գրականության ծրագրերի հիմնական պահանջները; Այն դպրոցները, վոր արդեն ձեռք են բերել հիշած դասագրքերը, կարող են ղեկավարվել գրանցով, վորոց հավելումներով, գլխավորապես վրաց գրողների համապատասխան նյութերից, ոգտվելով այլ դասագրքերից ու աղբյուրներից; Սակայն, դժբախտաբար, շատ քիչ դըպրոցներ են կարողացել ստանալ սակավաթիվ սրինակներ; նախ VII իւ. դասագրքը բոլորովին չի ստացված, իսկ V, VI իւ. իւ. դասագրքերից այնքան քիչ և ստացված, վոր, որինակ, Թիֆլիսի դպրոցների աշակերտության 5—10% հազիվ ապահովված լինի:

Այս հանգամանքը հարկադրեց Վրաստանի կուստողկոմատին գործադրության մեջ դնել Հայաստանի Պետհրատի 1932 թ. լույս

„Ժայնուա დա Շրօմա“-ს ցամուցեմլողներ Սկսմա Ըլուղուսո

Ց. 370.

Ցուցանուն 247.

Ց. 500.

*) ՀՍԽՀ կուստողկոմատ: Ուսումնամեթոդական սեկտոր, միջնակարգ դըպրոցների (քաղաքի և գյուղի) V—X խումբ, պրակ V, 1933 թ. Յերևան:

ընծայած դասագրքերը, հարմարացնելով ըստ հնարավորության ծրագրի պահանջներին:

Սույն մեթոդական նամակի նպատակն էլ հենց այդ և. ցույց տալ թե ինչ չափով և ինչպես կարելի յե ուստագործել 1932 թ. դասագրքերը կայուն ծրագրերի պահանջների տեսակետից: Մենք չենք խոսում չորսամյակի մասին, վորովճետն «Սախելզամիթ» լույս ընծայած հայոց լեզվի դասագրքերը III և IV խ. խ. համար մեծ չափով ծածկեցին Վրաստանի հայկական դպրոցների կարգները: Մենք կիսունք միայն միջնակարգ դպրոցների (V—IX խ.) դասագրքերի և նրանց ուսուագործելու հնարավորությունների մասին:

Վ Խումբ. «Հայոց լեզվի և գրականության դասագիրք» V տ. կազմեցին Ս. Տարոնցի, Խ. Կանայան Ն. Ալլանվելության, 1932 թ. Յերևան:

Այս դասագիրքը կազմված է հին ծրագրերի համաձայն, նյութերը դասավորված են հասարակագիտական թեմաների շուրջ, վոր չի համապատասխանում նոր ծրագրերին: Սակայն դասագիրքն այնքան հարուստ նյութ և պարունակում, վոր կարելի յե նյութերը դասավորել ըստ նոր ծրագրի, պահպանելով նրա սիստեմը, միայն վորոշ գեղագրում վերցնելով միեւնույն հեղինակից համապատասխան այլ հոդված:

Մրագրի առաջին թեման և «Ժամանակակից հայ խորհրդային գրականություն».

Դասագրքի տարբեր բաժիններում գետեղված գրվածքները պետք ե համախմբել ըստ գրողների, այն կարգով, ինչպես ծրագիրն ե առաջարկում: Յեթե ծրագրի հանձնարարած նյութը չկա, ապա ինչպես ասացինք, պետք ե վերցնել նույն հեղինակի մի այլ գրվածք, վոր կարելի յե գտնել նույն դասագրքում: Կարևորն այն ե, վոր գյուղի դեմքը՝ վորպես խորհրդային գյուղի, պարզ լինի մատնանշած գրվածքներից: Այդ տեսակետից դասագրքի նյութերը կարող են բավարարել ծրագրի հիմնական պահանջները: Բնագլ պարագիրը չե, վոր մի հեղինակի բոլոր նյութերն աշխաղվի, կարելի յե բավականանալ մի կամ յերկու նմուշով: Նույնիսկ կարելի յե մի հեղինակ վորխարինել մի այլ համարելք հեղինակով, յեթե դասագրքում չկան համապատասխան հատվածներ, Որինակ ծրագիրը, խորհրդային յեղբայրական ժող. գրականությունից առաջարկում և Սերաֆիմովիչ «Յերկաթե հեղեղ»-ը (հատվածներ), բայց մեր հիշած դասագրքում նույն հեղինակից

վոչ մի կտոր չկա. կարելի յե այդ գեղագրում Սերաֆիմովիչի փոխարեն անցնել Մ. Գորկի, վորից կան դասագրքում մի քանի հատվածներ «Կոմքայն» և այլն: Նույնը պետք ե ասել նաև վրաց գրողների նկատմամբ: Ինչպես արդեն ասացինք, այս բաժինը կամ իսպառ բացակայում է կամ շատ թույլ ե պատկերացված: Անհրաժեշտ ե այդ բացը ծածկել այլ աղբյուրներից (հին դասագրքերից, Զարենցի «Նմուշներ վրաց գրականությունից» «Կարգա և արտասանիլ» ժողովածուներից և պարբ հրատարակություններից):

Ծրագրի հետևյալ թեման և «Հայ անցյալի գրական ժառանգություն»: Այստեղ ևս պետք ե վերցնել այնքան նյութ, վորքան հնարավոր ե յեղած դասերի քանակի տեսակետից, նույն կերպ դասավորելով գասագրքի նյութերը: Մեր կարծիքով պետք ե պահպանել հետևյալ կարգը. սկսել Ռաֆֆուց «Ճանուետեր Խաչոյի տունը» հատվածից: Այս փոքրիկ հատվածն անգամ պարզ ցույց ե տալիս նրա բուրժուական գաղափարախոսությունը, իշխանացնացումը նահապետական հարուստ սեփականատեր ընտանիքի, վորի հիմքերից մեկն ե շահագործումը (քուրդ ծառաներ, աղախիններ): Այսուհետև Ղ. Աղայանի «Հնի և Նորի պայքարը», «Ճախարակ», Հ. Թումանյանի «Գութանի յերգը», «Գիքորը» և այլն պարզ գաղափար են տալիս այդ շրջանի չքավոր գյուղացության ծանր վիճակի և հեղինակների գաղափարախոսության մասին: Վորքան վերջինները, մանավանդ Թումանյանը, գեղեցիկ և ծիշտ ձևով են պատկերացնում գյուղացու ծանր, անել կտցությունը, այնքան անզոր և անընդունակ են, վորպես մանրբուրժուական գրողներ, ցույց տալու գյուղի ազատագրման ծիշտուին: Գյուղացու (չքավոր և միջակ) ազատագրման ուղին ծիշտ ըմբոնելու համար անհրաժեշտ ե դասավանդման նյութ գարձնել վորպես լրագրի աշխատանք ըստ ծրագրի առաջարկության, ընկերագանովիչի կոլխոզնիկների առաջին համագումարում արտասանած ձառի մի հատվածը՝ «Սոցիալիստական տնտեսության նախապարաստումը» («Պրոլետար» 33 թ. № 43): Այսպիսի հակագրությունը հնարավորություն կտա աշխատանք լավ ըմբոնելու հեղինակների տարբեր գաղափարախոսությունը ըստ իրենց դասակարգային պատկանելիության:

Այսուհետև պետք ե անցնել Շիրվանզաղեյին. ի դեպ, դաստառն պետք ե տա համառոտ կենսագրական տեղեկություններ ամեն մի հեղինակի մասին համաձայն դասարանի ընդհանուր

պատրաստականության: պետք ե վերցնել դասագրքի «Նավթաշանքը» (մի հատված «Քառուից»), դուրս գցելով եջ 216-ից «պարզեր», վոր գործարանատերը ապորինի յեր աիրացել... մինչ ու ուկովիտ ձեռների աշխատանքին» չորս տողը, վոր աղավաղումն երնագրի, չի բղխում նյութի ներքին բովանդակությունից և հակասում ե հեղինակի ընդհանուր զաղափարախոսությանը իրեւ բուրժուական գրողի:

Գրական արժանիքներից բացի այս հատվածը պարզում ենակ հեղինակի գեմքը, նրան հետաքրքրում ե յերկույթի արտաքին կողմը (այստեղ նավթահանք ե), մեծությունը, ահռելիությունը, տեխնիկայի հզորությունը, նաև բանվորների վիճակը, խղճահարությունից ու կարելցությունից գրգված: Ուրիշ խոսքով, բուրժուական գեղարվեստագետին հետաքրքրում են արտադրողական ուժերը, քան արտադրական հարաբերությունները՝ կապիտալիստի և բանվորի փոխարարելությունը, շահագործումը, դասակարգային պայքարը: Այս հակադրությունն ավելի պարզ կլինի, յերե դասատուն կանցնի պրոլետարող՝ Հ. Հակոբյանին, նյութն ե դասագրքում զետեղված «Քաղաքը» բանաստեղծությունը, վոր արդյունաբերական խոշոր քաղաքի պատկերներին զուգընթաց տալիս ե նաև այս բարիքների «ստեղծողի» բանվոր դասակարգի վիճակը, հույյերը «փոթորկող սրտի բարախումը» ու «գերնպատակին» համեմուա անխորտակելի թափը:

Այս յերկու նյութի հիման վրա աշակերտները կարող են պարզ գաղափար կազմել թե ինչպես միենույն ժամանակաշրջանի գրողները՝ վորպիս տարբեր դասակարգերի ներկայացուցիչներ, ունեն տարբեր մոտեցումներ միենույն յերկույթի նկատմամբ:

Այսուհետեւ, յեթե դասարանի կազմն ու տված ժամերը հնարավորություն կատան, դասատուները կարող են անցնել նաև Շ. Կուրղինյան կամ Արագի՝ դասագրքում զետեղված նյութերի հիման վրա: Անշուշտ, դասատուները չպետք ե բավականան միայն դասագրքի նյութերով, պետք ե ոգտագործեն նաև հիշած հեղինակների ծրագրում մատնանշած վորոշ գրվածքներ տնային ընթերցանության սիջոցով:

Գերջում մենք տալիս ենք Թիֆլիսի գլուխներում կիրառվող տարեկան ծրագրերը, կազմված հիշած դասագրքի նյութերի հիման վրա: Յեթե վորե դպրոց իր տրամադրության տակ ունի 1933 թ. դասագրիքը, պետք ե պահպանի հեղինակների նույն կարգը, մի-

այն վերցնելով այս կամ այն հեղինակից այն նյութը, կոր կա իր գործադրած դասագրքի մեջ:

Ծրագրի վերջին թեման՝ «XIX դարի արեվմայնավագական գրականության դասընթաց, ուսման վեցերորդ տարի, կազմեց ՅԵ. Սողոմոնյան, պրակ I և II, 1931 թ.», իսկ մի քանի դպրոցներում՝ Ս. Հարությունյանի և Գ. Այվազյանի կազմած «Դասագիրք լեզվի և գրականության, վեցերորդ տարի, 1932 թ.»:

Վեցերորդ խմբերում 1932—33 թ. գործ ելին ածվում յերկու դասագիրք. մի շարք դպրոցներում գործադրվում եր «գրականության դասընթաց, ուսման վեցերորդ տարի, կազմեց ՅԵ. Սողոմոնյան, պրակ I և II, 1931 թ.», իսկ մի քանի դպրոցներում՝ Ս. Հարությունյանի և Գ. Այվազյանի կազմած «Դասագիրք լեզվի և գրականության, վեցերորդ տարի, 1932 թ.»:

Վոչ առաջին և վոչ ել յերկրորդ դասագրքի կազմողները չեյին կարող ինարկե, նախատեսել այն փոփոխությունը, վոր ՀԿ (բ) կ. կենալոմի 1932 թ. ոգոստոս 25-ի վորոշման հիման վրա մտնելու յեր ծրագրի մեջ: Ուստի և այդ դասագրքերը հարմարեցրած չեն նոր ծրագրին: Զնայած այդ հանգամանքին՝ այդ դասագրքերը, վորպիս գրականության դասագրքեր, պարունակում են գրեթե բոլոր աչքի ընկնող հայ գրողների յերկերից վորոշ հատվածներ և հնարավորություն են բնձեռում դասատու ուսուցչին յեղած նյութերն ընտրել և դասագրել ըստ նոր ծրագրի թեմաների:

Խնչպես հայտնի յե, նոր ծրագիրը գրականության թեմաները գծելիս շեշտը գնում և գրողի դասակարգային պատկանելիության վրա: Յենելով այդ գրույթից՝ տվյալ թեմային վերաբերյալ նյութերը պետք ե բնորոշ և տիպական լինեն: այսինքն այդ նյութերը ցայտուն կերպով պետք ե արտացոլեն տվյալ դասակարգի կենցաղն ու հոգեբանությունը, ձգտութիւնը ու իդեալը, իսկ մյուս կողմից ել բնորոշեն հեղինակին՝ գորպիս այդ դասակարգի շահերի պաշտպանի, վորպիս նրա տրամադրությունների ու ձգտութիւնների արտահայտչի, վորպիս այդ դասակարգի իդեալողի:

Հենվելով այս սկզբունքի վրա՝ ծրագրի առաջին թեման՝ «Հայ առետրա-արդյունաբերական կապիտալիզմի շրջանի գրականությունը» մկնում ենք Գ. Սունդուկյանի «Պեպոյից» (հատված), վոր զետեղված և ՅԵ. Սողոմոնյանի կազմած դասագրքի

Ապրակում: Այս հատվածն անցնելիս հարկ կլինի գաղտնիքը տալ «Պեպոյի» բովանդակության մասին և առանձնապես կանգ առնել Զիմզիմովի բնութագրի վրա, վորապեսզի պարզ լինի աշակերտի համար կապիտալի կուտակման սկզբնական շրջանի պատկերը և այդ շրջանի ներկայացուցիչ առևտրականի կեղեքից բնույթը: Դրա հետ միասին պետք է բնորոշել հեղինակի՝ Գ. Սունդուկյանի բուրժուական դրամատուրգ լինելու հանդամանքը, նրա պայքարն առևտրի չարչիական և «անարդար» ձևերի գեմ և նրա ձգտումը՝ պատվաստել «Կուլտուրական» առևտրի ձևերն հայ վաճառուականության մեջ: Դասակարգավիճն հակամարտության գիծն այլք գրվածքում պետք է վորակել վորապես մանր բուրժուական աշխատավորի լոկ բարոյական բողոք առևտրական կապիտալի շահատակությունների գեմ:

Այսուհետև անցնում ենք Շիրվանզագեյի «Հրդեհ նավթահանքում» և «Քառոս» գրվածքներին (հատվածներ): Իսկ «ՎարդանԱճրումյանը» տալիս ենք վորպես տնային ընթերցանության նյութ: Շիրվանզագեյի այդ գործերը ցայտուն կերպով բնորոշում են 90-ական թվերի առևտուրա-արդյունաբերական քաղաքի պատկերը, բուրժուազիայի հին ու նոր սերունդների հոգեբանությունը, կենցաղն ու ձգտությունը: Նպատակահարմար և ճիշտ կը լինի նախ պարզել հարստանալու տեսչով առզորված գավառական առևտուրականի (Վարդան Աճրումյան) գաստիարակությունը, ձգտություներն ու իրեալլ և ապա անցնել արդյունաբերական բուրժուազիայի, նրա նոր սերնդի գատարկապորտ կյանքին ու այլասերված կենցաղին: Դրա հետ միասին կարևոր կլինի պարզել Շիրվանզագեյի, վորպես բուրժուական գրողի, դասակարգային դեմքը, շեշտելով նրա ոպպազիցիոն վերաբերմունքը գեղի խոշոր բուրժուազիան և նրա հայացքը բուրժուազիայի վերափոխման մասին:

Ապա անցնում ենք մեր այն հեղինակները, վորոնք պատկերացնում են մի կողմից քաղաքի և մյուս կողմից գյուղի մանր բուրժուազիայի կյանքը։ Քաղաքի մանր բուրժուազիայի՝ արհեստավորաշխատավորության և բուրժուական շենքի ստորին տառիճանների վրա կանգնած մտավորականության պատկերազիրը պետք է համարել Նար-Դոսին, վորի գրական արտադրանքներից տվյալ դաստիքերում գետեղված են «Նեղ որերից մեկը» (1932 թ., հրատ. դասազրություն) և «Անսա-Մարոյան»։ Այդ գրվածքներից և վոչ մեկը չի պատկերում արհեստավորաշխատավորության կյան-

քըն ու կենցաղը, նյութականն-կուլտուրական վիճակը (Այդ պատկերը գտնում ենք հեղինակի «Մեր թաղը» ժողովածույի մեջ ամփոփված պատմվածքներում): Այնպես վոր դասատուն ստիպված է լինելու սահմանափակվել ճիշջալ դասագրքերում գետեղված այդ յերկու զրգածքներով, ավելի ճիշտ, միայն մեկով («Նեղ որերից մեկը»), քանի վոր «Աննա Սարոյանը» թեմայի պարզաբանման տեսակետից առանձին նշանակություն չունի տվյալ խմբի համար: Այսպիսով Նար-Դոսը բնորոշվելու յե իր գրական գործունեության, այսպես ասած, յերկրորդ շրջանով, յերբ նա իր վըրձինը գործադրում և մանր բուրժուական մտավորականության մուայլ գելքը նկարելու և հուսալքված տրամադրությամբ գծում ենրա քայլքայման պատկերը:

Ինչ վերաբերում ե՞ գյուղի պատկերին, պետք է տոհվ վոր հիշյալ գասագրքերը բավարարաշափ նյութ են տալիս գյուղի և գյուղացիության ուսումնասիրության վերաբերմամբ՝ սկսած նաև հապետական կենցաղից մինչև պրոլետարացման յենթարկվող գյուղը՝ Նահապետական կյանքի նկարը, նահապետական կենցաղով ապրող գյուղացիության կուլտուրական ստոր վիճակն և գըծում Հ. Թումանյանը «Ոռեցի Մաքոն» և «Մարոն» չափածո գըր վածքներում, ժամանակակից գյուղի նյութական տիսուր վիճակը՝ «Հին որհնություն» և «Ճերունու հառաջանքը» չափածոներում; Ալ. Ծատուրյան և Հովկ Հովհաննիսյան տալիս են իրենց ժամանակակից գյուղի հոգսերն ու ցանկությունները, իսկ Վ. Փափազյան և Շահնազարյան, ծուլուրյան և Ազապյան պատկերում են քայլքայլող և պրոլետարացման յենթարկվող գյուղը; Դասատուն պետք է ոգտագործի այդ չափածո և արձակ նյութերն այնպիսի գասագորությամբ, վոր մի կողմից աչքի ընկնի գյուղի և գյուղացիության աստիճանական քայլքայման պատկերն առեւրարդություն աստիճանական կապիտալիզմի ըրջանում, մյուս կողմից ել պահպանվի չափածո և արձակ գրգածքների համաշափ հաջորդականություն։ Դրա հետ միասին անհրաժեշտ է պարզել վերոհիշյալ գրուների վերաբերմանը զեկի գյուղացիության խափերը, զեկի նրանց նյութական-կուլտուրական վիճակը։ Հեղինակների ընորոշումը պետք է թողնել ավելի բարձր խմբակների համար, քանի վոր գասագրքերում զետեղված նյութերը հնարավորություն չեն ընձեռում նման լրիվ բնորոշումներ տալու։ Պետք է ի նկատի ունենալ մի հանգամանք ևս գուցե գասատույի արամագրության տակ յեղած ժամանակը հնարավորություն չտա այդ

բոլոր նյութերն անցնելու, այդ գեպքում պետք է թողնել նախ ամբողջական հեղինակներ (Հ. Հովհաննիսյան, Ա. Շատուրյան), յերկրորդ, հեղինակների այն գրվածքները, վորոնք առանձին նոր բան չեն ավելացնում յեղածի վրա:

Մինչուկտեմբերյան հեղափոխական գրականությունից դասագրքում (1931 թ. հրատ.) զետեղված են Սրազու «Արևը», «Խալիչայի յերգը» և «Լույսերը», վոր բավարար պետք է համարել հեղինակին բնորոշելու, նրա գասակարգային գեմքը պարզելու և ժամանակի ու միջավայրի ազդեցությունը գյուղի վրա ընդգծելու համար:

Յերկրորդ թեման ե՝ «Խորհ. յեղբայրական ժողովուրդների 19-րդ դարի գրական ժառանգությունը»: Այս թեմայի վերաբերյալ Ֆարգրում նշված են նյութեր Նինոշվիլուց, Պուշկինից և Կերմոնտովից: Սակայն մեր հիշած գասագրքերում չկան այս հեղինակները: Ուստի նրանց պետք է փոխարինել այն գրողներով, վորոնց գրվածքներից նմուշներ կան գասագրքում—իվանե Քուչշվիլի, Նեկրասով, Չեխով, Սերաֆիմովիչ, Խոչպես տիմոնում ենք, գասագիրքը վրաց գրականությունից տալիս ե միայն մի հեղինակ, իսկ թուրքական գրականությունից՝ և վոչ մի հեղինակ: Այս պակասը գասատուն պետք է լրացնի տնային ընթերցանության նյութերով՝ հանձնարարելով Յե. Զարենցի «Նմուշներ վրաց գրականությունից» և «Նմուշներ Ազգբեջանի գրականությունից» գրքերը: Նույնը կարելի յե անել նաև ոռուական գրականության մասին՝ Պուշկինի և Կերմոնտովի նկատմամբ:

ԾԱՆՈԹ.—Յեթե գասատուն գործ է ածում 1932 թ. հրատարակած գասագիրքը, ապա ավելի հեշտ կլինի համաձայնեցնել նոր ծրագրին:

VII.

1932 թ. VII խմբի համար հրատարակվել են յերկու գասագիրք՝ Յե. Սողոմոնյանի կազմած: Մեկը 2 պրակով, վոր բույս և անսել ոգոսատուն, մյուսը՝ մի գրքով—գեկտեմբերին, Վերջինս ագելի յե համապատասխանում գրականության գասագանգման պահանջներին, սակայն այստեղ ել չափաղանց քիչ են նմուշները յեղբայրական հանրապետությունների գրողներից, իսկ վրաց գրականությունից վոյքնչ չկա: Այնպես վոր գասատուն իր արածագրության տակ յերկու գասագրքերն ունենալով միայն կարող ենոր ծրագրի հիմնական մասինը անցնել: Իսկ վորոշ կրծատումնե-

բով ու լրացումներով հնարավոր և ոգտագործել առանձինառանձին թե մեկը և թե մյուսը:

Երագրի առաջին թեման՝ «20-րդ դարի հայ գրականության (հայսահոկենբերյան) շրջան» ընդգրկում է հետեւյալ հեղինակներին՝ Նար-Դոս, Ավ. Խսահակյան, Շուշ. Կուրդինյան, Վ. Տերյան և Հ. Հակոբյան:

Նար-Դոսից, վոչ մի հատված չկա 2 պրականոց գասագրքում, ուստի պետք է վերցնել նույն խմբի Հ. Սողոմոնյանի կազմած վերջին գասագիրքը: Նար-Դոսից այստեղ բերված է մի խոշոր հատված՝ «Աննա Սարոյան», վոր և պետք է գարձնել գասագանգման նյութ, վորպես մի նմուշ բուրժուական ընտանիքի քայլքայման և բուրժուական գասագիրքի մասին: Անշուշտ միայն այս հատվածը չի կարող լրիվ գաղափար տալ Նար-Դոսի, վորպես մանր-բուրժուական գրողի մասին: անհրաժեշտ ե այդ բացը ծածկել անային ընթերցանության միջոցով («Մեր թաղը» «Նեղ ուրիշից մեկը») (Տես «Պոլեստարի» հավելված «Գրական արշավ» № 10—11, 1931 թ. «Նար-Դոսի գրական-գործնեության 45-ամյա տարեգարձին նվիրված):

Յեթե գասատուի տրամադրության տակ միայն 2 պրականոց գասագիրքն ե, ապա պետք է բավականանալ միայն գասարանական ընթերցանությամբ և վերլուծությամբ «Հոգուն վրա հասավ» պատմվածքի:

Յերկու պրականոց գասագրքի մեջ բոլորովին չկան հատվածներ Ավ. Խսահակյանից, անհրաժեշտ ե այդ գրողին ուսումնամիբել այն նմուշներով, վոր բերված են VII խ. վերջին գասագրքի մեջ: Սակայն կարևոր ե, վոր գասատուն յուրաքանչյուր հեղինակի գեմքը պարզելու համար ի նկատի ունենալ նաև նախորդ տարիներում անցած և ընթերցանությամբ լրացրած՝ հիշած հեղինակների գրվածքները: Այս հատվածների հիման վրա պետք է պարզել հիշած հեղինակի գաղափարախոսությունը: Ավ. Խսահակյանը վորպես զյուղի և քաղաքի քայլքայլող մանր բուրժուատպիացի գաղափարախոս: (Գ. Վանանդիցի «Ավ. Խսահակյանի պոեզիան» տես Ավ. Խսահակյանի «Բանաստեղծություններ» 30 թ. վերջում):

6. Կուրդինյանի գեմքը պարզելու համար բավական են «Հանգըրեք ջաները» և «Բանգորները» բանաստեղծությունները: Թեև գասագրքում չկան, բայց դժվար չե այդ բացը ծածկել ար-

տագրության միջոցով, բացի այդ, աշակերտները անցած առավազ դասընթացից ծանոթ պիտի լինեն նրանց:

Վ. Տերյանից նմուշներ քիչ կան, ինչպես առաջին («արևածագ»), նույնպես և վերջին դասագրքում: Միայն այս հատվածների հիման վրա դժվար է փոքր ի շատե լրիվ դադարիար տալ նրա ստեղծագործության հիմնավոր մոտիվների (իրականությունից գդգոնության, մեկուսացման, հոռետեսության և այլն) մասին: Դասատուն կարող է արտագրության միջոցով մի յերկու բանաստեղծություն ևս դասավանդման նյութ դարձնել վերջին դասագրքում զետեղված նմուշների հետ միասին:

Հ. Հակոբյանից դասագրքում կան հատվածներ՝ «Հեղափոխություն», «Նորառագուստ»-ից, վոր կարող են պարզել նրա ուրույն գիմքը բուրժուական բանաստեղծների համեմատությամբ, վորանու մեր առաջին պլոտիտարական գրողի: Հ. Հակոբյանով փակվում է այս թեման և սկսվում է հաջորդ՝ «Հայաստանի խորհրդային գրականություն» թեման: Այս թեմայի դասավանդման առանձնահատկությունն այն է, վոր խորհրդային շրջանի գրողների հետ այս խմբակի աշակերտներն բավականաչափ ծանոթություն ունեն նախորդ տարիների դասընթացից և տնային ընթերցանությունից: Դասատուն այստեղ ամփոփելու և լրացնելու յև հեղինակների մասին աշակերտների ունեցած տեղեկությունները, կանգ առներով նրանց ստեղծագործության հիմնական մումենաների վրա, իհարկե յենելով այն կոնկրետ նյութերից, վոր կան 2 դասագրքում ել: Այդ կողմից 2 դասագիրքն ել քիչ են տարրերվում իրարից և դասատուն կարող և ոգտագործել թե մեկը և թե մյուսը: Այն հեղինակները, վորոնցից վոչ մի նմուշ չկա դասագրքերում (Դ. Դեմիրճյան, Վ. Թոթովինց) կարելի յե անցնել տնային ընթերցանության միջոցով:

Ծրագրի մյուս թեման՝ «Խորերդ, յելք, ծոլսվուրզների պրոլետարիան գրականություն» ընդգրկում է հետևյալ հեղինակներին: Ն. Զոմելեթիլի, Կ. Լորթկիպանինիձե, Զ. Զարարլի, Հ. Սաղըխ, Մ. Գորկի և Շոլոխով: 2 պլրականոց դասագրքում կան նմուշներ միայն Մ. Գորկուց, մասնած բացը ծածկել Զարենցի «Նմուշներ վրաց գրականությունից» և «Նմուշներ ադրբեջանյան գրականությունից» կամ այլ ազբյուրներից: Հակառակ զեղքում, կարելի յե նաև փոխարինել գրանց այն հեղինակներով, վորոնցից նմուշներ կան դասագրքում, որինտիկ, Ելիզ. Լորթկիպանիձե «Յերկա-

թե յեղբայրներ», Պանֆերով «Ագրոքաղաք», Նաղարլի «Դավանականը» կամ Նաղիմ Հիքմեթ «Արևելք և Արևմուտք»:

Վերջին թեմայից՝ «Արեմայելվողական ժամանակակից նեղափոխական գրականությունից» կա համապատասխան հատված դասագրքում Բելլա Իլլեշից «Մազմանակատում», իսկ ամբողջտկան վեպը «Տիսուն բոցերի մեջ» ոգտագործել վորում տնային ընթերցանություն:

Ներկա դասագրքերը աշխատանքի գրքի բնույթ ունեն: Աղբանք բացի գրական նյութերից պարունակում են հարց-առաջադրություններ և քերականական-ուղղագրական գիտելիքներ համապատասխան վարդություններով: Ինչպես հայտնի յե, աշխատանքի գիրքը պետք է անջատ լինի գրականության դասագրքից: Այդ բաժիններից ամեն մեկը պետք է ունենա իր առանձին նյութն ու մշակման ձևերը: Ներկա ձևով թերի յե մեկը և թե մյուսը: Թանի վոր դասագրքերը գործածության մեջ են, մհանք կաշխատենք մի քանի գիտողություններ անել այդ մասին: Առաջադրություններ

Վ իւ. դասագիրքը կազմողները յելակետ ունենալով հասարակագիտական թեմաները, գրվածքների առաջադրությանը ավել են ավելի հասարակագիտական բնույթի: Բնականաբար այս ձևի առաջարությունները չեն կարող առանց վերամշակման և ուղղման զեկավար գեր կատարել: Դասատուն թե առանձին թեմաների և թե առանձին յերկի նկատմամբ պետք է կազմի առաջադրություն, յելակետ ունենալով հետևյալ կլիսավոր կետերը.

1) Գրվածքի գաղափարը, 2) իրականության դասակարգային արտացոլում (ժամանակաշրջանը, տիպերը, նրանց հոգեբանությունը, իզձերը, գործելակերպը) 3) հեղինակի ստեղծագործության ուղին, նրա դասակարգային պատկանելությունը և 4) նրա արժեքը սոցցինարարության տեսակետից: Այս ընդհանուր սկզբունքներից յենելով դասատուն պետք է կոնկրետացնի, մասնավորի առաջադրությունը ավյալ հեղինակի գրվածքի համեմատ, հաշվի առնելով նյութի ներքին բովանդակությունը, ձեր և աշակերտների (տվյալ խմբակի) պատրաստականությունը: Անշուշտը դասագրքում պատահում են նաջող հարցադրությեր, դասատուն պետք է ի նկատի ունենա և ոգտագործի: սակայն հիմնականում նա պետք է կազմի նոր առաջադրություն, յենելով հիմնական նպատակադրումից: Ինչ վերաբերում է Հ. Սողոմոնյանի կազմած VI և VII իւ. իւ. դասագրքերում գրած առաջադրություն-

ներին, ապա դրանք, ընդհանրապես ավելի հաջող են կազմած և դասատուն կարող ե վորոշ կրծատումներով, լրացումներով ընդունել և զեկավարվել անշուշտ, մեր առաջադրած սկզբունքներով:

Քերականություն—լեզվական գիտելիքներ. Քերականության վերաբերմամբ պետք ե ասենք հետեւյալը. նախ դասագրքերը չեն սպառում ծրագրի վող դասընթացն ըստ տարիների, սիստեմատիկ պատմական հաջորդականությամբ: Յերկրորդ՝ նրանց մեջ արտահայտված են բուրժուական լեզվաբանության և փորմալիստական քերականության սկզբունքները (նախադասության բնորոշում, ասույթի «անսություն», զուգակից բառեր և այլն): Յերրորդ՝ քերականությունը շարունակում ե մնալ ծառայական գերի մեջ: Չորրորդ՝ անհրաժեշտ վարժություններ պակասում են և նույնիսկ, յերեքնակի, մատնանշած նյութերը քերականական կամ ուղղագրական այս կամ այն յերեւյթը պարզաբանելու անսակետից՝ բնորոշ չեն (որ. V դասագրքից եջ. 147. Հակերտի, բութի նկատմամբ և այլն):

Այսուղի ևս դասատուն յելակետ պետք ե ունենա միայն և միայն ծրագրի պահանջները, նրա սիստեմը և դասավանդությունը վերակազմի այն ուղղությամբ, վոր քերականությունն ունենա իր պատշաճ տեղը, ինչպես պարտադրում են Համկոմկուսի կենտրոնի պատմական վորոշումները:

VIII և IX. խումբ

Այս խմբում զբուկանությունն անցնում ենք ժամանակագրական կարգով՝ պատմական հաջորդականությամբ: Գրականության ծրագիրն այս խմբերում ընդգրկում է 19 և 20-րդ դարի հայ գրականությունը մինչև խորհրդային գրականություն, վորն անցնում ենք X խմբում: Ուրիշ խոսքով՝ այս յերկու խմբերում անցնում ենք բուրժուատիայի տիրապետման շրջանի գրականությունը, յենթարկված վորոշ պերիոդի պայքարայի, սկսելով մինչքուրժուական, ֆեոդալական հաստրակական հարաբերությունների տիրապետման շրջանի գրականությունից, վոր տրված և ծրագրում իբրև ներածություն: Այդ ներածությունն անցնելու համար հատուկ դասագիրք չունենք: Ժողովրդական բանահյուսությունը, միջնադարյան տաղերգունների և աշուղների ստեղծագործություններից նմուշներ պետք ե ընտրի ուսուցիչը զանազան աղբյուրներից և կարգա դասարանում վերլուծելու համար աշակերտների հետ միասին: Ականք և. Արովյանից միայն կարելի յե դիւ-

մել յեղած դասագրքերի ոգնության, վորոնց ոգտագործման համար կարևոր ենք համարում հետեւյալ գիտողություններն անել:

VIII խումբ

VIII խմբի համար ունենք միայն մի դասագիրք—«Հայ գրականություն», I գիրք, կազմեց Սուրենաթյան: Այս դասագիրքը, վոր արդեն սպառված ե, առաջ նյութ և պարունակում հայ գրականությունից, բայց ծանրաբեռնված և ավելորդ նյութերով, վորոնք ծրագրից դուրս են մնում: Սակայն ուրիշ ավելի հարմար դասագիրք չկանունական կամ անհամար գիրքն ու այդ դասագրքին, չնայած, վոր նա ծրագրին չի հարմարեցրած և ատրիներ առաջ հրատարակված լինելով՝ չունի վերջին տարիներս լույս տեսած գրական-քննադատական հոդվածները: Սակայն այդ դասագրքին ունի այն առավելությունը, վոր ընտրությունը գրողների յերկերից՝ կատարված և խնամքուի. այնպես վոր բերված նյութերը պարզ գաղափար են տալիս թե ժամանակաշրջանի և թե գյուղի դասակարգային բնույթի մասին: Միայն մի յերկու գրողների նկատմամբ այդ առավել կողմը նաև մանում ե, վորի մասին կիսունքը իր տեղում:

Ինչպես հայտնի յե, նոր ծրագիրը գրականության դասընթացի սիստեմատիկ կուրս և նշումն սկսելով նոր կազմակերպվող բուրժուազիայի գրականությունից մինչև 19-րդ դարավերջի գյուղագիրները. ուրիշ խոսքով՝ նոր ծրագիրն ընդգրկում է հետեւյալ գրողների յերկերը—և. Արովյան, Պ. Պողյան, Դ. Աղայան, Մ. Նալբանդյան, Գ. Սունգուլյան, Բագդի, Հ. Հովհաննիսյան, Մուրացան, Ազապյան, Աղելյան, ձուդուրյան, Մամիկոնյան և Շահնազարյան: Կանգ չառնելով առանձին թեմաների վրա՝ կառնենք՝ վոր Արովյանի «Վերք Հայաստանի» վեպից բերած հատվածները միանգամայն բավարար են, և հենց նույն հաջորդականությամբ ել պետք ե անցնել այդ հատվածները, վորով և գաղափար կարպի թե վեպի բովանդակության և թե գյուղի աշխարհայացքի մասին: Դասագրքում չկա միայն «Պարապ վախտի խաղալիքը», վոր պետք ե անցնել ըստ ծրագրի: Դրա համար կարելի յե ոգտագործել և. Արովյանի «Յերկերի ժողովածուն»:

Ինչ վերաբերում ե դասագրքում զետեղված քննադատական հոդվածներին Արովյանի նկատմամբ, պետք ե ասել, վոր այդ քըննադատականները նպատակին չեն ծառայում: Ա. Կարինյանի և Սուրենաթյանի մոտեցումն Արովյանին տարբեր են և կարող են

շփոթություն առաջ բերել: Դաստիուն քննադատարար և մոտենալու այդ և ընդհանրապես քննադատական բոլոր հոդվածներին՝ ոգտագործելով նաև Խոր. Հայաստանի պետհամալսարանի գրականության հեռակա գասընթացների համար կազմած գասախոսությունները, իսկ Արովյանն անցնելու համար մասնավորապես Աշ. Հովհաննիսյանի գրական-քննադատական հոդվածը, վոր լույս տեսավ վերջերս:

Պողյանի գրաֆքներից ծրագիրը նշում և միայն «Հացի խնդիրը»: Այդ, ինարկե, անբավարար և Պողյանին բնութագրելու և ժամանակաշրջանի դյուլի սոցիալ-տնտեսական դրությունը պարզելու համար, ուստի և ծրագիրը հանձնարարում և «Բղեն» և «Յեցեր»-ը տնային ընթերցանության համար: Այդ հանձնարարությունը կարեսը պետք է համարել, Բղենի և մանավանդ, Բալասան/աղայի տիպերը պարզելու համար: Դաստիում «Հացի խնդիր» վեպից բերած հատվածները բավարար են: «Բղենից» և «Յեցերից» կարելի յեր ավելի բնորոշ կտորներ բերել: Պակասը լրացնելու յե գասատուն՝ կարդարով մանավանդ Բալասան ուղայի դեմքը բնորոշող հատվածներ: Նպատակահարմար կիննի անհատական զեկուցումներ հանձնարարել ուստանողներին՝ Պողյանի հիշյալ վեպերից, քանի վոր այդ գրքերը դժվար ե ճարել:

Դ. Աղայանից ծրագիրը նշում և «Յեցեր քույր», «Բանտառեղծություններ» և «Տորք Անգեղ», վորոնցից վոչ մեկը չկա դաստիում (բացառությամբ «Ճախարակ»-ի) և ընդհակառակը, դրանց փոխարեն հատվածներ են զետեղված «Արություն» և Մանվելը ու «Բաժանություն» գրպահքներից: Նպատակահարմար կիննի ծրագրի նշած նյութերից «Տորք-Անգեղ»-ն անցնել ուստարվա առաջին քառորդում՝ իբրև ժողովրդական բանահյուսության նմուշ վերամշակված Աղայանի կողմից: «Տորք-Անգեղ»-ը կարելի յե կարդալ Դ. Աղայանի, Հ. Թումանյանի և այլն կազմած «Հայ գրողներ» դաստիում: «Յեցեր քույր»-ից պետք է կարդալ այն հատվածը («Միջանկյալ»), վոր բնորոշում և ձալարենց թաթոսի գեմքը: Այդ գիրքը չգտնելու զեպքում անպայման պետք է անցնել «Հայ գրականություն» դաստիում զետեղված «Բաժանությունը», վորը գաղափար և տալիս գյուղի հասարակական կյանքում առաջացած նոր յերեւոյթների և նահապետական ընտանիքի կազմալուծման պատճառների մասին: «Արություն և Մանվելը» ծրագրում նշված է իբրև տնային ընթերցանության նյութ: Այդ գիրքը չգտնելու զեպքում պետք է բավա-

րարվել Սուրխաթյանի կազմած դաստիում բերված հատվածներով:

Ինչ վերաբերում է Միք. Նալբանդյանին, պետք և ասել վոր նրա գրական-հրապարակախոսական և գաղափարախոսական գեմքը բնորոշելու համար, կենարունական տեղ պետք է բոնի «Յեցերագործությունը վորպիս ուղիղ ճանապարհ» գիրքը՝ վորից և վոչ մի հատված չկա դաստիում իրքի վոչ գեղարվեստական գրվածք: Մինչդեռ «Յեցերագործությունից» պետք և դաստիում կարգալ հատվածներ, վորոնք պարզում են Նալբանդյանի վերաբերմունքը գեղի կապիտալիզմը, ֆրանուիական հեղափոխությունը, աշխարհակալությունը, ուստական ճորտափրությունը, ազգությունը և մանավանդ նրա հողային—տնտեսական թերախան: Այլապիս գժվար և վորոշել Նալբանդյանի աշխարհայացքը, իգելուգիան: Դաստիում զետեղված բանաստեղծական նըմուշները բավարար պետք է համարել: Պակասավոր պետք և համարել նաև Գ. Սունդուկյանից բերած հատվածները («Պետպյան»): Անհրաժեշտ է կարգալ դաստիում հատվածներ «Խաթարալայից» բնորոշելու համար 60-ական թվ. կապիտալի կուտակման շրջանի ներկայացուցիչների գիշատիչ հոգերանությունը և խարդախությունը, մանավանդ վոր ծրագրում դրված և «Խաթարալայն»: Թիֆլիսի բարբառը խոչընդուռ չպետք և հանդիսանա «Խաթարալայն» անցնելու:

Ռաֆիխն ներկայացված և շատ ավելի հատվածներով, քան հարկավոր է: Պետք և բավականանալ միմիայն «Վոսկի աքազաղի», «Խենթի» և «Զալալեղինի» հատվածներով և հատվածներ կարգալ նաև Գ. Վանանդեցու «Բաֆֆու վեպերը» քննադատական գրվածքից՝ մասնավորապես ուսմանտիպսի մասին; Նպատակահարմար է, վոր աշակերտները տանը կարդան ամբողջովին Վանանդեցու այդ գիրքը՝ Բաֆֆու բուրժուական-աղայանական բնույթը և իգելիստական աշխարհայացքը պարզելու համար:

Մուրացանից պետք է կարգալ «Նոյի ագռավը» և «Առաքյալը», իսկ «Խորհրդագոր միանձնութին», վոր չկա դաստիում, առաջ անհատական զեկուցման նյութ: Բացի դրանից պետք է կանգ առնել Մուրացանի սկզբնական շրջանի գրական գործունյության վրա և պարզել նրա պահպանողական-հետապիմական բնույթը:

19-րդ դարում մյուս գյուղագիրների մանրամասն ուսումնակիրությունն անհրաժեշտություն չի ներկայացնում, քանի վոր

Նրանք քայլայվող գյուղի մասին նոր բան չեն ասում, միայն խտացնում են փաստերի և պատկերների շարքը: Գրականության հատկացրած շաբաթական ժամերի թիվը ստիպելու յե դասատույին թուցիկ կերպով տալ այդ գրվածքների վերլուծությունը: Ավելի նպատակահարմար կլինի առաջադրություն տալ 19-րդ դարավերջի գյուղագիրների մասին, շեշտերով այն հարցերը, զորոնք առանձին կարեռություն են ներկայացնում այդ ժամանակաշրջանի գյուղի տնտեսական, սոցիալական և կուլտուրական պատկերը պարզելու կամ, ավելի ճիշտ, Հ. Թումանյանի և Մուրացանի գծած դարավերջի գյուղի պատկերը լրացնելու համար:

Այսպես ուրեմն, ոգտագործերով մեր ձեռքի տակ յեղած զառագիրքը, ծրագիրը լրիվ չափով անցնելու համար անհրաժեշտ է կազմել թեմաների հետ կապված տնային ընթերցանելի գրքերի ցուցակ և հանձնարարի աշակերտներին կարդալ նշած գրքերը մինչև համապատասխան գրական թեման անցնելը: Դրա համար սախորոքեատք ե տալ առաջադրություններ և ապա ստուգողական հարցեր՝ ստուգելու աշակերտներից տանը կատարած աշխատանքը և նրա վորակը:

Յեկոպական կլասիկ գրականությունից պետք ե անցնել ծրագրում նշած նյութերից այն և այնքան, վորքան հնարավորություն կաան տեղական գրադարանային պայմանները:

IX խումբ

Ծրագիրն IX խմբի համար նշում ե հետևյալ հեղինակներին — Եիրվանգագե, Հ. Թումանյան, Նար-Դոս, Ա. Խսահակյան, Վ. Տերյան և Հակե. Հակոբյան, Հ. Թումանյանի յերկերից նմուշներ են գետեղված Սուրխաթյանի «Հայ գրականություն» I գրքում, իսկ մնացած հեղինակներն անցնելու համար պետք ե ձեռքի տակ ունենալ նույն կազմողի «Հայ գրական» II գիրքը:

Հով. Թումանյանից դասագրքում կա «Անուշը», «Գիքորը» և մի քանի քանաստեղծություններ: Այդ քիչ ե, ինարկի: Սակայն պետք ե ի նկատի ունենալ, վոր Հ. Թումանյանի մյուս աշխատությունների մեծ մասին աշակերտները ծանոթ են նախորդ տարիներից և յերկրորդ՝ Թումանյանի գրվածքները գտնելը համեմատաբար ավելի հեշտ ե: Այնպես վոր դասագրքում յեղածները պետք ե լրացնել ուրիշ աղբյուրներից վերցրած նմուշներով:

Եիրվանգագեյց դասագրքում կան հատկածներ «Քառա»-ից և «Նամում»-ից: Մնացած նյութերի համար պետք ե ոգտագոր-

ծել Եիրվանգագեյի «Յերկերի ժողովածու»-ները: Գ. Վահանդիցու «Եիրվանգագե» գրական-քննադատական ուսումնասիրությունը պետք ե ոգտագործել մասնավորապես Եիրվանգագեյի մասին թեզիսներ կազմելու համար:

Նար-Դոսից, ըստ ծրագրի, պետք ե անցնել «Մեր թաղը», «Ապանված աղավնին» և «Մահը»: Աստվին յերկու գրվածքներից նմուշներ և հատվածներ կան դասագրքում, վոր և պետք ե անցնել անպայման՝ պակասը լրացնելով տնային ընթերցանությամբ: «Մահը» գժվալ ե ճարվում, ուստի նովագականարմար ենք գըտնորոշ և հեղինակի գրական գեղարվեստական դեմքը բնորոշելու համար, և զետեղված և դասագրքի մեջ:


Վերջին յերեք գրողների՝ Ա. Խսահակյանի, Վ. Տերյանի և Հակոբյանի բանաստեղծություններից դասագիրքը բավականաչափ նյութ և մատակարարում ե, կարծում ենք, զրանով կարելի յեր բավարարվել յեթե ծրագիրը չնշեր Վ. Տերյանի սահեծագործությունների բոլոր 4 հատորները: Այդ բոլորն, ինարկե, գժվալ ե դասարանում անցնել ի նկատի ունենալով գրականության հատկացրած ժամերի քանակը, ուստի պետք ե դասագրություն չեղածը հանձնարարել տնային ընթերցանության համար:

Արհմտահայ, ինչպես և յեկոպական կլասիկ գրականությունից վոչ մի նմուշ չկա հիշյալ դասագրքում և չեր ել կարող մեներ քանի վոր դասագիրք կազմողն այլպիսի նովատակ չի ունիցել: Բնականարար, այդ նյութերն անցնելու համար պետք ե գիտել առանձին գրքերի ագնության, վորչափ հնարավոր կլինի ավյալ պայմաններում: Արհմտահայ գրականության մտնին գտղափար կազմելու համար, հարկ կլինի ոդագործել Հակե. Պարոնյանի «Յերկերի ժողովածու» և «Արհմտահայ բանաստեղծներ» գրքերը:

Յեղրակացությունը պարզ ե, 8-րդ և 9-րդ խմբերի համար պետք ե իրեն գասագիրք գործադրել Սուրխաթյանի «Հայ գրականություն» I և II գրքերը, քանի վոր առաջիմ հրատարակի վրա ուրիշ դասագիրք չկա: Թերին պետք ե լրացնել այլ գըրքերից:

Ինչ վերաբերում ե մեթոդական կոզմին, պետք ե ասել վոր այդ ինպրում ուսուցչին պետք ե ոգնեն առանձին զրքերով և զանազան պարբերականներում լույս տեսած մարքսիստ քննադատների հոդվածները, այլև ծրագրի «Բացարականը»: Սուր-

Էսաթյանի կազմած դասագրքերում դրված հարցերն ու թեմաները պակասավոր են և անսիստեմ: Կարելի յէ ոգտվել այդ հարցերից ու թեմաներից ավելի լրիզ առաջազրություններ կազմելու՝ ձեի ու բովանդակության միասնության, գրականության ու հասարական-քաղաքական կյանքի հարցերը պարզելու և անցյալի գրական ժառանգության բնագավառն ոգտագործեն ոգտագործելու խնդրի յուշացումն խորացնելու ամար, ինչպես պահանջում է ծրագիրը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0255171

10-848

9M